

ՍՓՅՈՒՌԱՆՆԵՐ ԿՅԱՆՔ ԺԻՅՆԻ ԶԱՐԱԲԵՋՈՒՄԻ ԱՐՄԻԱՆ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ՍՓՅՈՒՌԱՆՆԵՐ
(1979—1980 թթ.)

ՔՈՒԼՂԱՐԻԱ

Սոֆիայում, Պոլսում, Վառնայում, Սոֆիայում «Երևան» կազմակերպության նախագահության տեղի են ունեցել հանդիսություններ՝ նվիրված Մեծ եղեռնի 65-ամյակին։ Սոֆիայի հայկական գերեզմանոցում 1915 թ. Եղեռնի զոհերի հիշատակին կանգնեցված հուշարձանի մոտ հավաքվել է հոծ բաղնիք, եղել են ելույթներ, «Երևան» երգչախումբը կատարել է երգեր, դրվել են ծագիկներ։

«Երևան», 3 մայիսի, 1980

Սոֆիայում, հունիսի 11-ին մեծ շուքով նշվել է միջնադարյան հայ փիլիսոփա Դավիթ Անհաղթի ծննդյան 1500-ամյակը։ Հանդիսությունները կազմակերպել են Բուլղարիայի գիտությունների ակադեմիային առընթեր փիլիսոփայության և սոցիոլոգիայի միասնական կենտրոնը, ԲԺՀ ՅՈՒՆԵՍԿՕ-ի ազգային հանձնախումբը, Հայրենական ճակատի ազգային խորհուրդը, Բուլղարա-սովետական բարեկամության համաժողովրդական կոմիտեն, «Երևան» կազմակերպության կենտրոնական վարչությունը և սովետական գիտության ու մշակույթի տունը։

Հանդիսավոր ժողովին ներկա են եղել ԲԿԿ Կենտկոմի անդամ, ակադեմիկոս Սավա Կանովսկին, բուլղարական փիլիսոփայական ընկերության նախագահ և Միջազգային փիլիսոփայական ֆեդերացիայի պատվո նախագահ, Հայրենական ճակատի ազգային խորհրդի քարտուղար Ժիվկո Ստոյանովը, բուլղարա-սովետական բարեկամության կոմիտեի նախագահի տեղակալ Միխայիլ Մանևը, պրոֆեսոր-գոկտոր Ստեֆան Անգելովը, ԲԳԱ փիլիսոփայության և սոցիոլոգիայի միասնական կենտրոնի տնօրեն, «Երևան» կազմակերպության կենտրոնական վարչության նախագահ Տիրան Բարիքյանը, հայտնի գիտնականներ, հասարակայնության ներկայացուցիչներ։

Ակադեմիկոս Սավա Կանովսկու ներածական խոսքից հետո Դավիթ Անհաղթի կյանքի և գործունեության մասին դեկլացումով հանդես է եկել պրոֆեսոր Սարգիս Սարգսյանը։ Ողջունի խոսք է ասել ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ, պրոֆ.

Դ. Բրուտյանը։ Եզրափակիչ խոսքում պրոֆեսոր-գոկտոր Ստեֆան Անգելովը կանգ է առել մեծ մտածողի այն գաղափարների վրա, որոնք չեն կորցրել իրենց այժմեականությունը։

Դավիթ Անհաղթին նվիրված գիտական ժողովներ են տեղի ունեցել նաև Պոլսում, Սոֆիայում, Բաղարշիկում, Վառնայում, Բուրգասում, Խասկովոյում։

«Երևան», 14, 21, 28 հունիսի, 1980

Սոֆիայի Կլիմենտ Օխրիդսկու անվան պետական համալսարանի արևելյան լեզուների ամբիոնը հրատարակել է հայ-բուլղարերեն և բուլղարերեն-հայերեն բառարան, որի հեղինակն է ղոցենտ է. Սելյանը։

«Ջաբրոն», 4 հուլիսի, 1980

Նույն հաստատության արևելագիտական ամբիոնին կից վերսկսվել են հայերեն լեզվի դասընթացները։ Տեղի է ունեցել առաջին պարամունքը, որի ժամանակ դասընթացի ղեկավար է. Սելյանը ներկայներին ծանոթացրել է հայ ժողովրդի պատմության ու լեզվի զարգացման կարևոր փուլերին։ Դասընթացներին մասնակցում են տարբեր մասնագիտության անձինք։

«Երևան», 15 նոյեմբերի, 1980

ՌՈՒՄԻՆԻԱ

Բուխարեստի համալսարանում Սիլվիա Աճեմյանը պաշտպանել է դոկտորական դիսերտացիա՝ «Ռումինիայի հավաքածուներում պահպանված միջնադարյան հայ արվեստի ձևագիրներ» թեմայով։ Ուսումնասիրված են վեց ձևագրեր։ Տարոնի ավետարանը (1306 թ.), Ֆամագուստայի ճաշոցը (1350 թ.), Կիլիկիայի ավետարանը (XIV դարի առաջին կես), Սուրհաթի ավետարանը (1346 թ.), Կաֆայի ավետարանը (1350 թ.) և Սուրհաթի մյուս ավետարանը (1354 թ.)։ Առաջին շորս ձևագրերը գտնվում են Կլուժի պետական արխիվներում, իսկ վերջին երկուսը՝ Բուխարեստի հայ Առաջնորդարանում։

«Ապագա», 24 նոյեմբերի, 1979

Բուխարեստի համալսարանի օտար լեզուների բաժնի դասական և արևելյան լեզուների և ընդհանուր լեզվաբանության ամբիոնները, Արևելյան ուսումնասիրությունների ընկերակցության հնդեվրոպաբանության բաժնի թրակարանական բաժանմունքը վերջերս նրատարակել են «Ստուդիա ինդո-էօրոպա առ Դակորոմանդոս բերթինենթիա» վերտադրված լեզվաբանական ուսումնասիրությունների մեկ հատոր։

Աշխատության հիմնական մասը կազմում է Ֆրանչեսկա Պրիթշանուի «Հարաբերություններ հայերենի և դակո-մոեգիերենի միջև» ուսումնասիրությունը։ Հեղինակը աշակերտել է անվանի հայագետ Վրլադ Բընըցիանուին։ Ինչպես տեղեկացնում է «Արարատը», հայերենի բաղմաթիվ օրինակներով ապացուցվում է մի կողմից հայերենի թրակյան, մյուս կողմից՝ դակերենի հնդեվրոպական ծագումը։ Գրքում բերված են նոր տվյալներ բալկանյան լեզուների հետ հայերենի կապակցությունների վերաբերյալ։

«Արարատ», 29 սեպտեմբերի, 1980

Գ Ի Հ

«Առֆրառ.-ֆերլագ» հրատարակչությունը «Համաշխարհային գրականության հանրամատչելի մատենաշարով» լույս է ընծայել Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրերը» վեպը երկու գրքով, որոնց շապիկները ձևավորված են Մարտիրոս Սարյանի նկարներով։ Գրքի սկզբում տպագրված է հեղինակի կնոջ՝ Ալմա Մալեր-Վերֆելի հուշերից մի հատված՝ վեպի ստեղծման պատմության վերաբերյալ։

«Շարժում», 12 սեպտեմբերի, 1979

ԼԵՀԱՍՏԱՆ

Հեհական արևելագիտական ընկերության Վարշավայում լույս տեսնող «Արևելագիտական հանդես» եռամսյա պարբերականի վերջին համարում տպագրված է Ակսել Բակունցի «Ալպիական մանուշակ» պատմվածքը լեհերեն։ Հանդեսի էջերում հաճախակի նյութեր են հրապարակվում նաև հայոց պատմության, Սովետական Միությունում և այլ վայրերում լույս տեսնող հայագիտական աշխատությունների մասին։

«Ալպիական մանուշակը» պատմվածքի և հայ այլ գրողների ստեղծագործությունների մեծ մասի թարգմանին է գրող (այժմ հանգուցյալ) Բոգդան Դեմբարսկին։

«Արև», 14 օգոստոսի, 1980

Լեհ ազգագրական ընկերության Կրակովի բաժանմունքին կից ստեղծվել է Հայ մշակույթը

սիրողների խումբ, որի 40-ից ավելի անդամները նպատակ ունեն ծանոթանալ հայ ժողովրդի մշակույթին, ուսումնասիրել հայոց լեզուն, կապեր հաստատել Հայաստանի մշակութային և գիտական հաստատությունների հետ։ Նրանք ուսումնասիրում են նաև Հեհաստանի տարբեր քաղաքներում բնակվող հայերի ավանդությունները, ազգային սովորությունները։

Խմբակի անդամները, ինչպես հայտնում է «Շարժումը», հիմնականում Կրակովում, ինչպես նաև Սիեզիայի քաղաքներում ապրող հայեր ու լեհեր են, մասնագիտությամբ գիտաշխատողներ, արվեստարաններ, նկարիչներ, դերասաններ, ճարտարապետներ և այլն։ Կազմակերպիչն է Կրակովի Ազգագրական թանգարանի աշխատակից Յանուշ Կամոցկին, որը մի քանի տարի առաջ եղել է Հայաստանում և նյութեր է հավաքել այդ թանգարանում ստեղծվող հայկական բաժնի համար։ Խմբակի նախագահ է ընտրված պատմաբան, իրավաբան, լեհահայ Միխալ Բոհմովիչը, քարտուղար՝ Կրակովի Յագելոնյան համալսարանի դասախոս, կենսաբան, գիտությունների դոկտոր, լեհահայուհի Թերեզա Դասակասը։ Անդամների թվում են շեյներենի դասախոս դոկտ. Ա. Զարեկը, որը թարգմանել է Նահապետ Քուչակի տաղերից, Յագելոնյան համալսարանի արևելագիտության բաժնի վարիչ և հայերենի դասախոս, դոկտոր Անդոյ Պիսովիչը (որի մագիստրոսական թեզը նվիրված է Աշտարակի շրջանի Փարպի գյուղի խոսվածքին)։ Պիսովիչը թարգմանություններ է կատարել Հովհաննես Թումանյանից, Ավետիս Իսահակյանից և Պարույր Սևակից։ Յագելոնյան համալսարանի կողմից հրատարակվող «Հնդեվրոպական լեզուների ակնարկ» ժողովածուի համար նա դրել է հայոց լեզվին նվիրված ընդարձակ հոդված։

Տարեկան հավաքների ժամանակ խմբակի անդամները զեկուցումներ պիտի լսեն հայոց պատմության և հայ մշակույթի մասին։ Արդեն տեղի են ունեցել մի քանի այդպիսի հավաքներ։

«Շարժում», 24 սեպտեմբերի, 1980

ԼԻՐԱՆԱԼ

Բեյրութի հայկական ուսանողական միությունների միացյալ մարմնի նախաձեռնությամբ Մեծ եղեռնի 65-ամյակի կապակցությամբ Բեյրութի համալսարաններում տեղի են ունեցել մի շարք միջոցառումներ, որոնցից առաջինը կազմակերպվել է ապրիլի 23-ին Հայկազյան թուեղում, ուր անգլերեն դասախոսել է Աղատուհի Սիմոնյանը։

Բեյրութի ամերիկյան համալսարանում ևս նշվել է ապրիլյան եղևնի 65-ամյակը։ Այստեղ

դասախոսել է Շ. Խորիկյանը, Հանդեսին ներկա են եղել 500 հոգի հայ և օտար (ոչ լիբանանցի) ուսանողներ:

«Արաբառ», 5, 6 մայիսի, 1980

Հայկազյան քոլեջի «Հայագիտական ուսմանց կեդրոնը» հունիսի 1-ին կազմակերպել է լիբանանահայ ժամանակակից նկարչությանը նվիրված ցուցահանդես: Բացումից առաջ Սեդա Պարսումյան-Տատոյանը հանդես է եկել զեկուցումով: Ցուցադրվել են լիբանանահայ 26 նկարիչների գործերը:

«Կունչ», 7 հունիսի, 1980

Բեյրութում նշվել է Հայկազյան քոլեջի հիմնադրման 25-ամյակը: Հորեկյանական հանդեսությունների կապակցությամբ հունիսի 16-ին պաշտոնական ընդունելություն են կազմակերպել լիբանանի վարչապետ Սելիմ Հոսր և կրթական նախարար Պութրոս Հարպը: Քոլեջի պատմության մեջ առաջին անգամ ղեկավարի վկայականներ են հանձնվել հաստատության հիմնադրմանը և զարգացմանը շոշափելի նպաստ բերած չորս մտավորականներին:

«Շարժում», 23 հուլիսի, 1980

ՍԻՐԻԱ

Հալեպում այս տարվա հունվարից լույս է տեսնում «Նոր ապրիլ» թերթը, որի պատասխանատու խմբագիրն է Երևանի համալսարանի շրջանավարտ Բյուզանդ Մինասյանը:

«Ինչո՞ւ «Նոր ապրիլ» խմբագրական հոգվածում նշվում է, որ պարբերաթերթի անունը խորհրդանշում է հայ ժողովրդի վերածնությունը: Ինչպես տեղեկանում ենք «Հայրենիքի» ձայնից», «Նոր ապրիլ» մինչև այժմ լույս տեսած երկու համարներում ընդգծված է թերթի կողմնորոշումը դեպի Հայրենիք: Թերթում տպագրվում են հետաքրքիր նյութեր մշակութային կյանքի մասին, սիրիահայ գաղութի տարրեր քաղաքների և գյուղերի վերաբերյալ լուրեր և այլն:

«Հայրենիքի» ձայն», 13 օգոստոսի, 1980

ՀՈՒՆԱՍՏԱՆ

Թիզոսպասզիս» թերթը տպագրել է իր թղթակից Յանիս Լիցոսի հոգվածը «Սովետական Հայաստանի հրաշքը» խորագրով: Հեղինակը պատմում է Սովետական Հայաստան կատարած իր այցելության մասին, հատկապես նշելով գիտության, մշակույթի և ժողովրդական տնտեսության բնագավառում հայ ժողովրդի ձեռք բերած մեծ նվաճումները:

«Արև», 8 հունվարի, 1980

Հունաստանի գլխավոր օրաթերթերից մեկի՝ «Ափոնմաթինի»-ի առաջին էջում տպագրված է Սփյուռք Փայիաթաքիսի հոգվածը՝ նվիրված արևմտահայերի 1915 թ. եղեռնին: Հոգվածագիրը նշում է, որ հայկական քաղաքի գլխավոր պատասխանատուներն են եղել դահապետներ Խալեաթն ու Էնվերը և որ այդ երկու դահիճները առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում ոչնչացրել են մեկ և կես միլիոն հայերի: «Աշխարհը չէր ճանչցած ասկե ավելի մեծ թիվով գոհեր համրող քաղաք, ասում է Փայիաթաքիսը:

Համաշխարհային արվեստի, գրականության և գիտությունների բնագավառներում հուշակ ձեռք բերած հայերի անունները հիշատակելուց հետո հոգվածագիրը վրդովմունքով նշում է, թե Թուրքիայի ներկա ղեկավարները անպատկառորեն մերժում են ընդունել հայկական հարցի գոյությունը:

«Նուր օր», 26 օգոստոսի, 1980

ԿԻՊՐՈՍ

Կիպրահայ գաղթօջախը առաջին անգամ ապրիլի 24-ին մեծ հուշահանդեսով նշել է 1915 թ. հայ նահատակների հիշատակը: Նիկոգիայի քաղաքապետական թատրոնի սրահում հանդիսավոր նիստը բացել է ուսուցիչ Կարապետ Փափազյանը, բանախոսել է գաղթօջախի հոգևոր առաջնորդ Զարեհ վրդ. Ազնավորյանը: Գրական-գեղարվեստական բաժինն ավարտվել է Կիպրահայ թեմական ժողովի ատենապետ Պերճ Գևորգյանի փակման խոսքով:

«Ապաղա», 14 հունիսի, 1980

ԹՈՒՐԿԻԱ

1979 թ. սեպտեմբերի 12-ին Պոլսում մահացել է անվանի մտավորական, լեզվաբան պրոֆ. Հակոբ Մարթայանը:

Պոլսի հայկական դպրոցներում նա դասավանդել է հայոց լեզու, Բեյրութում՝ հայկական նախակրթարանի տնօրեն է եղել: Խմբագրել է «Լույս» շաբաթաթերթը, այնուհետև հաստատվել է Բուլղարիայում, որտեղ հիմնել է հայկական դանազան միություններ, հրատարակել է շաբաթաթերթեր: 1931—32-ին Սոֆիայի համալսարանում դասավանդել է թուրքերեն: Աթաթուրքի հրավերով եկել է Թուրքիա և նշանակվել թուրք լեզվաբանական միության ավագ մասնագետ, ապա 1936-ին Անկարայի համալսարանի լեզվի, պատմության և աշխարհագրության ամբիոնի ընդհանուր լեզվաբանություն ճյուղի դասախոս: 1940—1970 թթ. եղել է թուրք համալսարանի խմբագրապետը:

1961-ից սկսած «Մարմարայում» տպագրում է «Համայնապատկեր հայ մշակույթին» արժեքավոր աշխատությունը։ Առանձին հատորներով հրատարակել է «Առաջին փորձություն», «Գրի ծագումը», «Վարդանանց 1500-ամյակի խոհեր», «Աստվածաշունչը և աշխարհաբարը», ինչպես նաև լեոն Շանթի «Հին աստվածները» անգլերեն թարգմանությամբ։ Նա տիրապետում էր անգլերեն, ֆրանսերեն, իտալերեն, ալբաներեն, գերմաներեն, լատիներեն, ռուսերեն, լեհերեն և բուլղարերեն լեզուներին։

Մահվան առթիվ ցավակցական հեռագրեր են ուղարկել Թուրքիայի նախագահը, վարչապետը և այլ պետական գործիչներ։ Բնորոշ է սակայն, որ Թուրքիայում չեն գրում հանգուցյալի իսկական անունն ու ազգանունը, դրա փոխարեն կոչելով նրան «Դիլաշար» («Լեզվաբան»)։ Այս կապակցությամբ «Պայքարում» թարգմանաբար տպագրված է թուրքական «Կերեք» օրաթերթից Ռեֆիք էվրենի հոդվածը։ Հեղինակը քննադատել է պաշտոնական հաստատություններին, որոնք խուսափել են տալ Հակոբ Դիլաշարի հայկական ազգանունը։

«Նոր օր», 28 սեպտեմբերի,
13 նոյեմբերի, 1979

Թուրքական տուրիզմի և տեղեկատվության նախարարությունը եվրոպական լեզուներով հրատարակել է ուղեցույց-գրքույկների շարք՝ նվիրված Թուրքիայի արևելյան նահանգներին։ Տեսարժան վայրերի, պատմական կոթողների լուսանկարներից բացի տրված են բացատրական տեքստեր և հակիրճ պատմական ակնարկ։ «Կանչ» թերթում այդ գրքույկներից բերված են հատվածներ, որոնցում, ի դեպ, ասված է. «...Աղթամարի կղզին... ուր կրարծրանա հայկական սքանչելի փոքր եկեղեցի մը։ Աղթամարի Ս. Խաչ եկեղեցին, որ կառուցված է ժգարուն, իսկական գլուխգործոց մըն է շնորհի և նրբություն։ ...Եկեղեցիի շուրջը կարելի է տեսնել ավերակները վանական քանի մը շինություններու, ուր ժղարուն բնակած են հայոց եկեղեցվո կաթողիկոսները։ ...Կարս քաղաք... կարևոր քաղաք մը եղած է հայկական շրջանին (VIII—XI դարուն) և ատեն մը՝ կեդրոններն Բագրատունյաց թագավորության։ ...Քաղաքին վրա կիշխե ամրակուռ բերդ մը, որ կառուցված է ալեւրուն կողմէ... Բերդի ստորոտեն կարելի է այցելել Կարսի ամենաաչքառու կառուցումը, Սուրբ Առաքելոց եկեղեցին, ժգարուն Բագրատունի թագավորի մը կողմէ կառուցված հայկական հին եկեղեցի մը... Անի քաղաքը կառուցված է եղել Բղարու Բագրատունյաց իշխանական բնտանիքին կողմէ և կդառնա անոնց

մայրաքաղաքը դար մը ետք։ ...Փլատակ բազմաթիվ և սքանչելի կոթողներու կարգին պետք է տեսնել Սուրբ Առաքելոց եկեղեցին... ինչպես նաև Անիի տաճարը... իր շրջը կամարներով, հայ ճարտարապետության (Թղար) ամենանշանավոր կոթողներն մին է»։

«Կանչ», 15 նոյեմբերի, 1980

ԵՊԻԳՐԱՄ

Եզիպտահայ ինը գեղանկարիչներ մասնակցել են «Հայ գեղարվեստասիրաց միության» նախաձեռնած ցուցահանդեսին։ Կահիրեի «Թեքեյան» սրահում իրենց ստեղծագործություններն են ցուցադրել Շանթ Ավետիսյանը, Զոն Փափազյանը, Սարգիս Թոսունյանը, Արմենուհի Ժամկոչյանը, Սիմոն Շահրիկյանը, Անայիս Ուլունյանը, Գլուս Ռաթյ-Երկանյանը, Վահե Վարժապետյանը, էլիզ Փարթամյանը։

«Շառժում», 25 հունիսի, 1980

Բենհա համայնարանի դասախոս Ֆայել Նագիր Իսկանգարը գրել է մի ուսումնասիրություն «Փոքր Հայաստանի իշխանությունը խաչակիրներու և մամլուքներու միջև 1250—1377 թթ.» խորագրով (այն բաղկացած է 6 գլխից, ունի 18 քարտեզ)։ Հեղինակն այս ուսումնասիրության համար արժանացել է դոկտորի աստիճանի։

«Արև», 4 սեպտեմբերի, 1980

ՍՈՒԴԱՆ

Խարտումի Հայ երիտասարդական միության ակումբը Սուդանի հայկական փոքրաթիվ գաղութի համար կազմակերպում է հայկական հավաքույթներ, երաժշտական միջոցառումներ, որոնց ներկա են լինում նաև ոչ հայ բազմաթիվ հյուրեր։ Ակումբի վարչական կազմը բաղկացած է ինը հոգուց։

Խարտումի շուրջ 250 հոգի հաշվվող հայկական գաղթօջախը սիրով է մասնակցում իր Ակումբի կյանքին։ Հայկական ակումբի սեփական շենքի տարածքում են գտնվում բացօթյա թատերասրահը և մարզական կառույցները։

«Ապազու», 14 հունիսի, 1980

ԱՎՍՏՐԻԱ

Վիեննայի ազգագրության թանգարանում հայագետ էլիզաբեթ Բաուերի նախաձեռնությամբ կազմակերպվել է «Հայ արվեստի գանձերը» ցուցահանդեսը, որը տևել է շուրջ երեք ամիս։

Ցուցահանդեսում ներկայացվել են վաղ բրոնզե դեղարյան կավե ամաններ, կավե հին արձա-

Նիկեներ, Թոփրարկայնում լեման Հաուպտի կողմից հայտնաբերված մի շարք հնագիտական առարկաներ, ինչպես նաև արծաթյա լանջակալներ, բրոնզյա առարկաներ, Մեծադիր լուսանկարներով ցուցադրված են միջնադարյան Հայաստանի ճարտարապետական կոթողները, հայկական թանկարժեք ձեռագիր մատյաններ, արծաթակազմ զրքեր, եկեղեցական տարազներ և առարկաներ, խեցեգործական նմուշներ, որոնցից աչքի են ընկել Քյոթահիայից բերվածները, ինչպես և հայկական հին դրամներ, հայկական գորգեր և ազգային տարազներ:

Ցուցահանդեսում առանձին բաժին է հատկացվել Սովետական Հայաստանը պատկերող նյութերին: Եվրոպայի հայկական մամուլը, ինչպես նաև ավստրիական մամուլը լայնորեն լուսաբանել են ցուցահանդեսը: Այդ օրերին երկրորդ հրատարակությամբ լույս է տեսել էլիզաբեթ Բաուերի «Հայաստան, նրա պատմությունն ու ներկան» գիրքը:

«Հայրենիքի ձայն», 5 մարտի, 1980

Վիեննայում բացվել է Հայաստանի նկարիչների ստեղծագործությունների ցուցահանդեսը: Ներկայացված գործերը պատմում են Հայաստանի պատմական հարուստ անցյալի և Սովետական Հայաստանի ներկայի մասին:

«Երևան», 25 հոկտեմբերի, 1980

ԲՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Բրյուսելի «Լր Սուար» թերթը 1980 թ. ապրիլի 23-ի համարում տպագրել է Բելգիայի հայերի միության նախագահ էդուարդ Ժախյանի հոդվածը ապրիլյան եղեռնի կապակցությամբ: Հոդվածը թարգմանաբար տպագրված է «Զարթոնք»:

«Զարթոնք», 28 մայիսի, 1980

Բրյուսելի արվեստի և պատմության թանգարանում Բելգիայի Հայկական մարմնի նախաձեռնությամբ կազմակերպվել է IV—XIX դարերի հայկական ճարտարապետության ցուցահանդես, որը բացվել է մարտի 8-ին և տևել է մեկ և կես ամիս: Ցուցահանդեսի թանգարանի սրահներում տեղի են ունեցել երեք դասախոսություններ՝ Միլանի Հայկական մշակույթի ուսումնասիրության կենտրոնի հետ համատեղ:

«Զարթոնք», 1 մայիսի, 1980

«Ապագա», 7 հունիսի, 1980

ԻՏԱԼԻԱ

«Արևում» տպագրված է Միլանի Հայ մշակույթի ուսումնասիրության և վավերագրման

կենտրոնի 1979—1980 թթ. փետրվարի ընթացքում իրագործած միջոցառումների տեղեկագիրը, որից իմանում ենք, որ Ադրիանո Ալպագո-Նովելլոյի գլխավորությամբ կազմակերպվել է գիտարշավ դեպի Հայաստան:

Լույս է տեսել «Հայ ճարտարապետության հետազոտություններ» շարքից Հայ մշակույթի դասընթացի առաջին հատորը: Շուտով լույս պետք է տեսնի «Հայ ճարտարապետության վավերագրեր» շարքից գունավոր պատկերազարդ 10-րդ պրակը՝ նվիրված Ս. Ստեփանոսի վանքին (Իրան) ու Եկեղեցուն: Հայ միջնադարյան ճարտարապետությանը նվիրված ցուցահանդեսը, որ տարիներ շարունակ ներկայացվում է զանազան երկրներում, նախապատրաստվում է ներկայացվելու Բրյուսելում, Բոննոմ:

«Զարթոնք», 15 մարտի, 1980

«Արև», 24 մարտի, 1980

ՖՐԱՆՍԻԱ

Փարիզում հունվարի 23-ին մահացել է ՀՍՍՀ ԳԱ արտասահմանյան անդամ, միջազգային ճանաչման արժանացած 94-ամյա անվանի քարտեզագետ Զատիկ Խանդատյանը:

«Աշխարհ», 2 փետրվարի, 1980

Մայիսի 11-ին Փարիզում մահացել է ֆրանսահայ անվանի նկարիչ և արվեստագետ Զարեհ Մոթաֆյանը: Նա ավարտել է Միլանի գեղարվեստից ակադեմիան 1931 թ., արժանացել է մի շարք մրցանակների, ունեցել է անձնական ցուցահանդեսներ Փարիզում, Մարսելում, Լիոնում, Միլանում, Լոնդոնում, Բրյուսելում, Ժնևում, Միացյալ Նահանգներում, ինչպես նաև Հայաստանում:

«Աշխարհ», 17 մայիսի, 1980

Ֆրանսահայ գաղութը Փարիզում և Լիոնում հանդիսավոր կերպով նշել է մեկուկես միլիոն արևմտահայերի ցեղասպանության 65-ամյակը (ֆրանսահայ գաղութը 250—300 հազար է կազմում):

Փարիզի Նոտր-Դամ Եկեղեցիում ապրիլի 20-ին պատարագ է տրվել 1915 թ. ղուերի հիշատակին, ներկա են եղել հինգ հազարից ավելի հայեր և օտարերկրացիներ: Պաշտոնական հյուրերի մեջ են եղել Պապական նվիրակը, Եվրոպայի Հայոց Հայրապետական պատվիրակ Սեբաստիան արք. Մանուկյանը, Փարիզի արքեպիսկոպոս կարդինալ Ֆրանսուա Մարթին, Ֆրանսիայի արտաքին գործոց նախարարության ներկայացուցիչը, Լիբանանի դեսպանը և այլք:

«Ապագա», 7 հունիսի, 1980

Գ Ֆ Հ

«Pogrom» հանդեսը, որ հրատարակվում է Արևմտյան Գերմանիայում մի խումբ մտավորականների ջանքերով «վտանգված ժողովուրդներու ընկերության» պարբերաթերթն է, սկզբունքն է՝ պայքար ազգայնամոլության, ցեղապաշտության ու գաղութատիրության դեմ:

Հանդեսի մայիսի համարը նվիրված է հայության 1915—1918 թթ. կոտորածներին: Այդ համարում ի թիվս այլոց տպագրված է նաև Արմին Վեգների «Բաց նամակ Ամերիկայի Միացյալ Նահանգներու նախագահին»: 1980 թ. այդ ընկերությունը լույս է ընծայել նաև «Թալեաթ փաշայի դատավարությունը» գերմաներեն գիրքը, որի առաջարանը նույնպես պատկանում է Արմին Վեգներին:

«Զարթոնքում» թարգմանաբար տպված են Վեգների այդ երկու նյութերը:

«Զարթոնք», 19, 22 հոկտեմբերի, 1980

Հունվարի 12-ից մինչև ապրիլի 27-ը Վեսթֆալիայի Մյունստեր քաղաքի նախապատմական թանդարանը ամբողջովին հատկացվել է Ուրարտուի մշակույթին նվիրված ցուցահանդեսին, որին զուգընթաց կազմակերպվել է դասախոսությունների շարք, ինչպես նաև հրատարակված է Ուրարտուի մասին ամփոփ տեղեկություններ պարունակող շքեղ գրքույկ: Երեք տարի առաջ Մյունխենի նախապատմական թանդարանը կազմակերպել է Արևմտյան Գերմանիայում Ուրարտուին նվիրված առաջին ցուցահանդեսը. ավելի ուշ նման ցուցահանդեսներ են կազմակերպվել Գրեֆելդում և Համբուրգում:

«Շաբժում», 7 մայիսի, 1980

ԲՐԱՋՈՒԽԱ

Հ. Բ. Ը. Միության Սան-Պաուլոյի մասնաճյուղի վարչությունը սկսել է լույս ընծայել «Նոր Անի» անունով դրական, գեղարվեստական պարբերաթերթ: Անդրանիկ համարը ամբողջությամբ նվիրված է Մեծ Եղեռնի 65-ամյակին, պարունակում է հոգվածներ և բանաստեղծություններ:

«Նոր օր», 11 հուլիսի, 1980

Ռիո դը ժանեյրոյում լույս տեսնող «Ժողովուրդի Բրազիլ» պարբերականի 1979 թ. հոկտեմբերի 13-ի համարում լույս է տեսել Մարկոս Մարկուիսի «Դարուս առաջին ցեղասպանությունը» հոդվածը 1915 թ. հայկական կոտորածների մասին, որը թարգմանաբար տպված է «Պայքարում»:

«Պայքար», 30 հոկտեմբերի, 1979

ԱՐԳԵՆՏԻՆԱ

Բուենոս Այրեսում Մեծ եղեռնի 65-րդ տարեդարձի կապակցությամբ ապրիլի 21-ին տեղի է ունեցել մամուլի ասուլիս, որին հրավիրվել են Բուենոս Այրեսի թերթերի և հայկական մամուլի ներկայացուցիչները: Նրանց առջև հանդես է եկել Դավիթ Եպս. Սահակյանը:

Այնուհետև հանդիսավորությամբ և հոծ բազմության մասնակցությամբ, նշվել է ապրիլյան եղեռնի 65-րդ տարեդարձը:

«Սևան», 9 մայիսի, 1980

«Արաբաու», 15 մայիսի, 1980

Բուենոս Այրեսում 1979 թ. սեպտեմբերի 24-ից բացվել է Հ. Բ. Ը. Միության երիտասարդաց լիգայի կազմակերպած «Հայաստանի արվեստն ու սովորությունները Բուենոս Այրեսի մեջ» ցուցահանդեսը: Բացմանը ներկա են եղել մամուլի ներկայացուցիչներ: Ցուցադրվել են Հայաստանի հուշարձանների գունավոր նկարներ, արվեստի գործեր, հայկական տարազներ, եկեղեցական հագուստներ, գորգեր և հայկական երաժշտական գործիքներ:

«Պայքար», 30 հոկտեմբերի, 1979

ԱՆԳՈՒԱ

Թեբեյան մշակութային միության Հոնգոնի մասնաճյուղը կազմակերպել է Գրիգոր Նարեկացուն նվիրված երեկու Օրվա բանախոսն է եղել վաստակաշատ թարգմանիչ Միշա Գյուտյանը, որն ի դեպ «Մատյան ողբերգությունից» անգլերեն է թարգմանել որոշ հատվածներ: Թարգմանությունը լույս է ընծայել «Մաշտոց» հրատարակչությունը:

Երեկոյին մասնակցել են մեծ թվով դասերներ, ինչպես նաև անգլիացի հայագետներ, պրոֆեսորներ Լանգը և Դաուսթը:

Վերջում Մ. Գյուտյանը անդրադարձել է նաև Նարեկացու տաղերին, որոնց ձայնագրությունը, անվանի հայ երգիչների կատարմամբ, ունկնդրել են ներկաները: Միշա Գյուտյանի թարգմանությամբ անգլերենով նախկինում լույս են տեսել նաև «Սասունցի Դավիթը», հայկական ժողովրդական հեքիաթներ, Հովհաննես Թումանյանի, Ավետիք Իսահակյանի և ժամանակակից հայ գրողների գործերը:

«Արև», 29 ապրիլի, 1980

«Հայրենիքի ձայն», 21 մայիսի, 1980

Հոնգոնի հայկական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ լոնդոնահայ գաղութը արժանավայել նշել է եղեռնի

65-ամյակը: Ապրիլի 20-ին Ս. Սարգիս հայկական եկեղեցում տեղի է ունեցել հանդիսավոր հոգեհանգիստ, ապրիլի 24-ին բողոքի ցույց, ապրիլի 27-ին լոնդոնահայության առաջնորդ ներսիս եպս. Պողոսյանի նախագահությամբ և սովելի բան 500 հոգու ներկայությամբ՝ հուշահանդես, որից հետո կազմակերպվել է գեղարվեստական բաժին: Մայիսի 2-ին տեղի է ունեցել հուշ-երեկո՝ նվիրված նահատակ հայ դրողներին ու մտավորականությանը:

«Ջաբրոնի», 4 մայիսի, 1980

Լոնդոնի Քրուս Զելմ հրատարակչությունը վերջերս լույս է բնծայել Քրիստոֆեր Ջ. Ուորթերի «Հայաստան—ազգի մը գոյատևումը» խորագրով նոր գիրքը:

Հեղինակը հատուկ հետաքրքրություն է ցուցաբերում հայ ժողովրդի ժամանակակից պատմության նկատմամբ, նա այցելել է Վան, Կարս, Անի, Նրևան, էջմիածին:

Հատորում հատուկ վերլուծության է ենթարկված 1915-ին նախորդող ժամանակաշրջանի քաղաքական իրավիճակը, եվրոպական անդիջող և այլամերժ քաղաքական մրցակցության ոլորտն ընկած հայերի դառը ճակատագիրը:

Հատորում տեղ են գտել աչքի ընկած ավելի քան 120 հայ անվանի մարդկանց համառոտ կենսագրական տեղեկություններ: Գրքին կցված են քարտեզներ:

«Նոր օր», 29 օգոստոսի, 1980

Լոնդոնի էյ-Բի-Սի ռադիոկայանը մեկ ժամ տևողությամբ հաղորդում է տվել տեղի հայ գաղութի մասին: Ներկայացվել է գաղթօջախի պատմությունը, նշվել է, որ Լոնդոնում հանգրվանել են իլմիրից, Կիպրոսից, իսկ վերջին շրջանում նաև Լիբանանից ու Իրանից արտագաղթած հայերը: Հաղորդման ժամանակ նաև կարճ հարցազրույցներ են եղել մի շարք անվանի հայ և օտար գործիչների հետ:

«ԱՐԼ», 10 նոյեմբերի, 1980

Ա Մ Ն

Պենսիլվանիայի համալսարանի հայագիտական ամբիոնի նախաձեռնությամբ 1979 թ. նոյեմբերի 4-ին բացվել է հայ մշակույթին նվիրված համագումար:

Համագումարը բաց է արել համալսարանի պատմության բաժնի վարիչ պրոֆ. Վարդան Գրիգորյանը, այնուհետև դասախոսել է Փարիզից հատուկ հրավիրված պրոֆ. Ֆրեդերիկ Ֆեյդին՝ «Արտաքին քաղաքականությունից ազդեցու-

թյունը ս. Մեսրոպի գիրքեր. դյուտի զարգացման վրա» թեմայով:

Համագումարը ունեցել է հետևյալ սեկցիաները.

Ա. Հայաստան, Վրաստան և Պարսկաստան (նախագահ՝ Հարվարդի համալսարանի հայագիտական բաժնի վարիչ պրոֆ. Ռ. Թոմսոն)՝ այստեղ կարդացվել են «Վրացական կանուխ ժամանակներու թարգմանությունը վրա համեմատական ժամանակագրություն հայկական և հունական ազդեցություններու» (Բիրմինգհեմից՝ Նեվիլ Պրոտսոլ), «Ջրաղաշտականության հարցը Հայաստանի մեջ—Միհր և Վահագն» (Լոնդոնից՝ Ջեյմս Ռասել), «Հայոց ազդեցությունը կովկասյան ալպանացիներու վրա» (Նյու Ջերսի, Գլազերոն՝ Ռ. Հյուսթն) զեկուցումները:

Բ. Պատմություն և պատմաբաններ (նախագահությամբ՝ Միշել Վան էսբրուքի՝ Բրյուսելից), որտեղ լսվել են «Դ—Ն դարերու Հայաստանը սպարապետության շրջանին» (Ռ. Պետրոսյան՝ Նյու Ջերսիից), «Սերենոս՝ է գարու պատմիչ» (Վիեննայից հատուկ հրավիրված դոկտ. Մեսրոպ Ժ. Վրդ. Գրիգորյան), «Տեսությունը Սերենոսի Հերակլիոսի պատմության» (Ջավեն Ժ. Վրդ. Արզումանյան) զեկուցումները:

Գ. Ճարտարապետություն. կայացրի համալսարանից էդիտ Հոյբաուերը ներկայացրել է «Նախաքրիստոնեական ճարտարապետությունը Հայաստանի մեջ և անոր ազդեցությունը դասական ճարտարապետության վրա» և Ֆրեդերից՝ պրոֆ. Տիգրան Գույումճյանը «Հայկական ճարտարապետության յուրահատկությունները» դասախոսությունները:

Դ. Լեզու և լեզվաբանության բաժնում նախագահել է Միլանից Ջանկարլո Բոլոնիեզին: Այստեղ զեկուցել են Կլիվլենդից Ջոն Գրեպինը և Զիկագոյից էրիք Հեմֆր:

Ե. Գրականություն և փոխոստիպություն բաժնում նախագահել են պրոֆ. Ռիչարդ Հովհաննիսյանը և պրոֆ. Նինա Գարսոյանը: Զեկուցումներով հանդես են եկել. Արրահամ Տերեյան (Միչիգան), Լ. Լիփսբոմս (Նյու Յորք), Հեննինկ Լեման (Դանիա), Միշել Վան էսբրուք և Շահե արք. Աճեմյան (Իրուսաղեմ):

Զ. Կրոնք և պատմություն բաժնում զեկուցել են Շվեդիայից Անտրես Հյուլթկերտը և Երուսաղեմից՝ Մայքել Սթոն:

Է. Արձանագործության և ճարտարապետության բաժնում հանդես են եկել Լյուսի Տեր-Մանվելյանը (Բելմոնդից), Քերլին Քան (Նյու Յորքից) և Մարիո դ'Օնոֆրիոն (Հոտմից):

Համալսարանի հայագիտական ամբիոնը առանձին հատորով լույս է բնծայելու ներկայացված դասախոսությունները:

«Նոր օր», 27 նոյեմբերի, 1979

Լոս Անջելոսում Հայկական ուսումնասիրությունաց ընկերությունը և Կալիֆոռնիայի համալսարանի հայագիտական բաժինը համատեղ ձեռնարկել են «Հայկական դիմագիծը պատմության և գրականության մեջ» թեմայով գիտական ժողով, որ տեղի է ունեցել 1979 թ. նոյեմբերի 9—10-ին: Առաջին նիստը բացել է պրոֆ. Ռիչարդ Հովհաննիսյանը, որից հետո դասախոսել է նորա ներսեսյանը «Հայ արվեստագետին գեղագիտական փորձառությունը XX դարու մեջ» հարցի մասին: Այնուհետև դասախոսություններ են կարդացվել հետևյալ թեմաների շուրջ. «Ինչպես ուրիշները կտեսնեն մեզ (Լ. Համալյան), «Հայը արաբական աշխարհին մեջ» (Հ. Տեր-Կարապետյան), «Ամերիկահայը» (Ջեկ Անդրեասյան):

Նոյեմբերի 10-ին երկրորդ նիստում նախագահել է Ավետիս Սանճյանը: Այդ օրը դասախոսել են Ռ. Թոմսոնը («Հայկական դիմագիծը դասական գիրքերու մեջ»), Նինա Գարսոյանը («Հայկական դիմագիծը նախախաղական Իրանի մեջ»), Սպեռոս Վրիոնիսը («Հայկական դիմագիծը Բյուզանդիոնի մեջ»), Ջոն Քարսոնը («Նոր Զուլան և սաֆավիական դիմագիծը հայոց»):

Վերջին նիստում ելույթ են ունեցել Ռանդա Սյունին «Հայոց դիմագիծը ռուսական կայսրության մեջ», Գևորգ Պարտազճյանը՝ «Եվրոպայի ճանապարհորդների կարծիքը հայերի մասին», Ժիրայր Լիպարիտյանը՝ «Փոփոխվող ինքնագիմագիծը Օսմանյան կայսրության մեջ. ռայաներ և հեղափոխականներ» և Վահե Օշականը՝ «Հայկական ինքնագիմագիծը ժամանակակից գրականության մեջ» թեմաներով: Զեկուցումները կարդացվել են անգլերեն:

«Պայմար», 3 նոյեմբերի, 1979

«Լուսբեր», 22 դեկտեմբերի, 1979

Դետրոյտի Ուվեն համալսարանի հրատարակությամբ լույս է տեսել «Հայ պոեզիա. հինը և նորը» ծավալուն անթոլոգիան, որը կազմել է թարգմանել և առաջարկել է գրել գրականագետ Արամ Թուրգյանը:

Անթոլոգիան սկսվում է Սահակ Պարթևի շարականով և ավարտվում Պարույր Սևակի բանաստեղծություններով՝ ընդգրկելով արևմտահայ և արևելահայ 58 հեղինակներից բաղկած առանձին նմուշներ:

Ժողովածուն լույս է տեսել հայերեն, անգլերեն տեքստերով և հեղինակների դիմանկարներով:

«Գրական քեր», 14 մարտի, 1980

Նյու Յորքի «Մենտոր» հրատարակչությունը լույս է ընծայել «Գրական նոր գործեր Միջին Արևելքին» գիրքը, որի մի ամբողջ բաժին հատ-

կացված է հայ գրականությանը: Տպագրված են Ավետիք Իսահակյանի, Գուրգեն Մահարիի, Վախթանգ Անանյանի, Պարույր Սևակի, Հրանտ Մաթևոսյանի, Գևորգ էմինի, Սիվա Կապուտիկյանի, Զահրատի, Անդրանիկ Ծառուկյանի մի շարք ստեղծագործությունները և հայկական ժողովրդական առակներ ու ասացվածքներ՝ Կարիկ Պասմաճյանի թարգմանությամբ: Հայկական բաժնի նախարանը գրել է «Արարատ» անգլերեն հանդեսի խմբագիր և համալսարանի դասախոս Լեո Համալյանը: Հատորի վերջում տրված են համառոտ տեղեկություններ գրողների կյանքի և ստեղծագործության մասին:

«Շարժում», 26 մարտի, 1980

Լույս է տեսել հայագիտական նոր հանդեսի՝ «Հայ լեզվաբանական տարեգրքի» առաջին հատորը, որի տպագրությունը իրականացնում է Քրիվլենդի համալսարանի հրատարակչությունը համալսարանի լեզվաբանական խմբի տնօրեն Ջոն Գրեյպիլի ջանքերով: Խմբագրական կոլեգիայի մեջ են մտնում Զանկարլո Բոլոնիեզին (Իտալիա), Գևորգ Զահուկյանը, Ջոն Գրեյպիլը, Ռուդիգեր Շմիդտը, էրիկ Համփը (Զիկագոյի համալսարան), Մայքլ Սթոունը (Պենսիլվանիայի համալսարան) և Ա. Խաչատրյանը:

Հանդեսի առաջին հատորում տեղ են գտել ինը հոդված՝ անգլերեն, ֆրանսերեն և գերմաներեն լեզուներով և գրախոսություններ հայագիտական նոր հրատարակչությունների վերաբերյալ: Հատորը հիմնականում նվիրված է դասական և համեմատական լեզվաբանությանը: Հանդեսը տպագրվում է Ալեք Մանուկյանի մշակչությամբ հիմնադրամի հատկացրած միջոցներով:

«Հայրենիքի ծայն», 27 ապրիլի, 1980

Նյու Յորքի «Պրոյինի» թերթի 1980 թ. ապրիլի 9-ի համարում լույս է տեսել Սթավրոս Վիթալիսի կողմից հունարեն գրված «Հայկական սպանդը Օմիրոսի աչքով» հոդվածը: «Պայթարում» տպված է այդ հոդվածի թարգմանությունը: Հոդվածում ասվում է, որ հույն նկարիչ Օմիրոսը պատրաստել է Հայոց Մեծ եղեռնը պատկերող 18 մեծադիր պաստառներ, որոնք ցուցադրվել են նախ Նյու Յորքի հայոց Ս. Վարդան մայր տաճարի սրահում և ապա Մոնրեալում, Դետրոյտում, Լոս Անջելոսում, Բոստոնում, Ֆիլադելֆիայում և Եվրոպայի մի շարք քաղաքներում:

«Պայմար», 30 ապրիլի, 1980

Ամերիկահայ բուլեջի ուսանողների խորհուրդը հայկական ցեղասպանության 65-րդ տարեդարձի առիթով կազմակերպել է հայկական շաբաթ, որի բացումը տեղի է ունեցել ապրիլի

21-ին ցեղասպանության վերաբերյալ գրքերի և նկարների ցուցահանդեսով, Նույն օրը կազմակերպվել է ցեղասպանությանը նվիրված հատուկ հանդիսություն: Նախագահել է «Արմինիերն Օպերըվըրը» շարաթաթերթի խմբագիր Օշին Քեշիշյանը, դասախոսել է քոլեջի հայագիտական բաժանմունքի վարիչ Ժիրայր Լիսյանից, ցուցադրվել է նաև Ճ. Մայքլ Հակոբյանի «Մոռացված ցեղասպանություն» ֆիլմը:

«Արարատ», 5 մայիսի, 1980

Կոլումբիայի համալսարանի հրատարակչությանը 1978 թ. լույս է տեսել «Ծաղկաքաղ հայ բանաստեղծության» անգլերեն հատորը Դիանա Տեր-Հովհաննիսյանի և Մարգարետ Մարկոսյանի թարգմանությամբ: Հատորն ընդգրկում է V դարից մինչև մեր օրերն ընկած շրջանի բանաստեղծներին, բաղկացած է 358 էջից:

Ամերիկյան համալսարանի անգլիական դրականության պրոֆեսորներից Զոն Մընրոն այս անթոլոգիայի մասին գրախոսություն է գրել, որը թարգմանաբար տպված է «Արարատում»: Այնտեղ ի միջի այլոց ասված է. «Ոչ հայ ընթերցողին համար... վերոհիշյալ ծաղկաքաղը պատուհան մըն է, հայ բանաստեղծության վրա բացված: ...Այս ծաղկաքաղը պիտի հայտնաբերե շատերուն համար այն իրողությունը, թե Մերձավոր Արևելքի մեջ ծաղկյալ բրիտանական քաղաքակրթություն մը գոյություն ունի այն շրջանին, երբ Եվրոպան իր մանկությունը կապրեր. ...այս ծաղկաքաղին հրատարակությունը մշակութային կարևոր նախաձեռնություն մը ըլլալով՝ հայ գրականությունը դուրս կրեր իր աղգային շրջագիծեն»:

«Արարատում» տպագրված են նաև ամերիկացի անվանի գրողներ Ռոբերտ Բեն Ուորենի և Զոն Արդայկի նշումները այդ հատորի մասին:

«Արարատ», 19 հուլիսի, 1980

Քլիվլենդի նահանգային համալսարանի նախաձեռնությամբ նախատեսված է վերահրատարակել հայ մատենագրության գրաբար երկերը: Այդ շարքի առաջին երկու հատորները լույս են տեսել Caravan Books (Դեյմար, Նյու Յորք) հրատարակչության կողմից: Շարքում նախատեսված է առաջիկ ութ հատոր, ընդհանուր խմբագիր է նշանակված Քլիվլենդի համալսարանի պրոֆեսոր Զոն Ա. Իրեսպայինը: Բոլոր վերահրատարակվող երկերը ունենալու են մասնագետ բանասերների կողմից ղրված ընդարձակ ներածականներ:

Շարքի առաջին հատորը Ազաթանգեղոսի «Պատմությունն» է, որ վերատպված է Թիֆլիսի 1909 թ. հրատարակությունից: Ներածականը գրել է Հարվարդի համալսարանի պրոֆեսոր

Ռոբերտ Թոմսոնը: Հատորը բաղկացած է 600 էջից: Երկրորդը՝ Հովհաննես Դրասխանակերտցու «Պատմություն Հայոց» գիրքն է, թարգմանված Թիֆլիսի 1912 թ. իրատարակչությունից: Առաջաբանը գրել է Կոլումբիայի համալսարանի դասախոս դոկտ. Գրիգոր Մաքսուդյանը, որը անգլերենով առաջին անգամ ներկայացնում է Հովհաննես կաթողիկոսի կյանքն ու գործը: Գիրքը բաղկացած է 450 էջից: Հաջորդ հատորները պետք է ներկայացնեն Մովսես Խորենացու, Փավստոս Բուզանդի, Գրիգոր Նարեկացու, Ղազար Փարպեցու, Եղիշեի և Կորյունի երկերը:

«Նոր օր», 19 սեպտեմբերի, «Պայլար», 26 հուլիսի, 30 սեպտեմբերի, 1980

Նյու Յորքի ՀԲԸՄ-ի ցուցասրահում 1979 թ. սեպտեմբերի 16-ից բացվել է ֆրանսալայ նկարիչների ցուցահանդես, որում ներկայացված են շուրջ 30 ֆրանսալայ նկարիչների 130 գործերը: Անվանի նկարիչների թվում են Զաքար Զաքարյանը, Վարդան Մախոխյանը, էդգար Շահինը, Գառնիկ Զուլումյանը (Գառգու), Սարգիս Խաչատուրյանը, Բյուզանդ Թոփայանը և ուրիշներ:

Ցուցահանդեսը կազմակերպվել է ֆրանսալայ գրող Կարիկ Պասմաճյանի ջանքերով:

«Շաբուում», 26 սեպտեմբերի, «Ապագա», 3 հոկտեմբերի, 1979

Նյու Յորքի պատմության թանգարանում մշտական ցուցադրության համար բացվել է հայ դարավոր մշակույթը ներկայացնող բաժին: Ինչպես գրում է «Նոր օր», թանգարանի պատասխանատուներից հայտնի նազեստ դոկտ. Ուոլթեր Ֆերսթեդիս Կրտսերը նշել է, որ «աշխարհահռչակ թանգարանը պակասավոր պիտի ըլլար առանց հայկական ինքնությունը մշակույթը ներկայացնող բաժնի մը», և շնորհակալություն է հայտնել տիկ. էլենորա Օրջանյանին, որի ջանքերի շնորհիվ ձեռք են բերվել անհրաժեշտ իրերը:

Թանգարանի նորահաստատ բաժնում հայերենով «Հայաստան» և անգլերենով «Հայերը—կովկասյան ժողովուրդ» ընդհանուր մակագրությամբ առանձնացված են երեք բաժիններ՝ «Պատմություն», «Ձեռարկեստներ» և «Քրիստոնեություն», որոնցում դասավորված են հայկական մշակույթը ներկայացնող թանկարժեք բազմապիսի իրեր՝ իրենց բացատրություններով:

«Նոր օր», 3 հոկտեմբերի, 1980

Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ